

Տ. ԱՂԱՆ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՊԱՒԻՈԶՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՏՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻՒՆ

(9 մարտի 2003 թ.)

*«Մի համարիք եթե եկի լուծանել զօրէնս կամ
զմարգարէս, ոչ եկի լուծանել, այլ լնուլ»:*

(Մարթ. Ե 17)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Այսօրվա Ս. Ավետարանի ընթերցվածը մեր մարածումը կուղղն դեպի Քրիստոս ու Իր պարգամը, ուր կըսեն, թե մի կարծեք Օրենքը կամ մարգարեները լուծելու եկա, այլ կարար-յալին հասցնելու: Այս հարվածը մեզի կուսաբանեն փաստը պարզվիրաններն մեկ մասը, որ մեր Տերը Հիսուս Քրիստոս, ավելի ընդլայնված կերպով կենդկայացնեն մեզի «Միրն ընկերդ քո անձի պես», «Մի՛ գողնար», «Մի՛ շնար» և այս պարզվիրաններուն նմանները:

«Ոչ եկի լուծանել, այլ լնուլ»։ Հին Կրակարանն իր վերջակերպին չի հասնիր, այլ Քրիստոսով այն կամբողջանա ու իր լրումին կհասնի: Այդ է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի առաքելությունն այս աշխարհի վրա, ուր եկավ երկնային փնտրիությունն ամբողջացնելու այս աշխարհի վրա այնպես, ինչպես պարգամված էր Օրենքի մեջ, հարկապես Նճամարյա-նին, ինչպես նաև մարգարեությանց մեջ: Այն ամենը, որ մարգարեացված էր մարգարեա-կան թղթերուն մեջ՝ Քրիստոսով իրականացավ, իր լրումին հասավ: Ու Քրիստոս մանա-վանդ խաչի վրա Իր յոթ արարանայություններն մեկի մեջ ըսավ. «Ամենայն ինչ կարար-ված է»:

Հին և Նոր Կրակարանները երկնային փնտրիությանց կարարումն են, որ կհասարա-րեն, թե Քրիստոս եկավ մարդ անհարը բարձրացնելու դեպի կարարելություն, մարդ ան-հարը բարձրացնելու դեպի զԱստված այն վիճակեն, այն դրոթենեն, որուն մեջ ընկած էր մարդ արարածը: Եկավ փրկելու մարդկությունը, եկավ մարդուն մեջ Աստուծո պարկերը հստակեցնելու համար: Եկավ մարդուն մեջ Աստուծո Հոգին պայծառացնելու համար, որ-պեսզի մարդ արարածը, որ իր մեջ ունի Աստուծո պարկերն ու հոգին, կարողանա իրապես և լավագույն կերպով արարանայութիւն այն իր կյանքի ընթացքին բանիվ և գործով:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, երկինքեն երկիր իջավ, որպեսզի մարդ անհարը Աստու-ծուն կրկին մոյեցնեն, մարդ անհարը մաքրե-ազարեն իր մեղքերեն, իր հանցանքներն ու սխալներն և զայն դարձնեն Աստուծո որդեգիրը: Քրիստոս երկինքեն երկիր իջավ, որպեսզի մարդկությանը ցույց փա աստվածային սերը հանդեպ մարդուն: Աստված Իր աստվածութ-յունից չէ, որ իջավ, այլ Քրիստոսով մարդ անհարը բարձրացնել ուզեց դեպի երկինք: Ու այսօր, երբ Հայաստանայաց Եկեղեցին Մեծ պառնեցողության մեջ է, և այսօր Արարքսման կիրակին է, մարդ անհարին անկումին օրն է, դրախտն արարքսվելու օրն է, մեզի կուգա

Ավերարանն ըսելով՝ Քրիստոսն է, որ մեզ պիտի կարողանա փրկել և կարարելության հասցնել:

Մարդ անհայրն իր անհնազանդությամբ արտաքսվեցավ դրախտեն, սակայն հաջորդող կիրակիները քայլ առ քայլ պիտի վերականգնեն մարդ անհայրն իր հավաքքին մեջ, որպեսզի կարողանա մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության առիթով վերանորոգված ու պայծառակերպյալ հոգիով կանգնի՝ դիմավորելու համար Ս. Հարությունը:

Մարդուն անկումը որքան որ դժբախտություն է, սակայն Քրիստոսով անոր վերականգնումն է ու արդեն երկնային սիրո արտահայտությունն է: Քրիստոս եկավ այդ կարարելությունն իր լուսին հասցնելու, Քրիստոս եկավ, որպեսզի մեզմե ամեն մեկը կարողանա անդրադառնալ, գիտակցի, զղջալ իր բոլոր հանցանքներուն, մեղքերուն, սխալներուն համար: Վիճակ մը, ուր մարդ անհայրը երբեմն չանդրադառնար:

Եկեղեցին պահեցողության այս ժամանակահատվածը հաղկացուցած է մարդ անհայրին, որպեսզի կարողանա նայել ինքն իր մեջ, ինքնաքննություն և ինքնազննություն կարարել իր կյանքին մեջ, թոթափել այն աղբերությունը, որ կա իր մեջ ու մաքրված, սրբված, անառար հոգիով մոտենալ աստվածային սրբության և Հրաշափառ Հարության:

Քրիստոս եկավ ոչ թե Օրենքը կամ մարգարեությունը լուծանելու, այլ եկավ իր լուսին հասցնելու: Եվ այդ լուսնը Քրիստոսի խաչելությունն է: Քրիստոս Իր արյան գնով մեզ գնեց, փրկագինը վճարեց, որպեսզի մարդ անհայրը կարողանա ձերբազարվել մեղքի ճիրաններեն, ձերբազարվել այն բոլոր սխալներեն, թերիներեն՝ ինքզինքն վերականգնելու համար:

Քրիստոս խաչի վրա Իր արյունը թափեց՝ մարդկությանը թողություն շնորհելու համար, մարդկության մեղքերու քավություն շնորհելու համար: Ու մենք երբ կնայինք խաչին, հոն կ'ընենք աստվածային սերը և աստվածային զոհողությունը հանդեպ մարդ անհայրին, հանդեպ մարդ արարածին: Ու հոն է, որ մեր հայացքը պետք է պահենք՝ քալելով այն ճանապարհեն, որով քալեց մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս՝ բարձրանալով դեպի Գողգոթա: Գողգոթան է, որ եղավ կարարելությունը Օրենքի և մարգարեության, երկնային ճշմարտության ու երկնային սիրուն: Ու հոն է, որ խաչելութենեն հետո, թաղումը և թափուր գերեզմանը եկավ նոր ճշմարտություն մը հաստատելու՝ երկնային կյանքը և երկնային ժառանգությունը:

Մարդ անհայրն իր կարարելությանը հասավ, իր ամբողջությանը հասավ Քրիստոսի խաչելությամբ և Քրիստոսի արյան հեղմամբ: Ու այս օրերուն, երբ Մեծ պահքի օրեր են, առիթ են մեզի համար, որ մեզմե ամեն մեկը կարողանա քննել ինքզինք, անդրադառնալ, սրբագրել զղջալով և իրապես մոտենալով այն բարձունքին, որ Քրիստոսի Գողգոթան ու խաչելության վայրն է: Այն արեն է, որ պահեցողությունը ծոմապահութենեն անդին կանցնի և մարդ անհայրի հոգեկան վերանորոգման պարճառ կհանդիսանա:

«Ոչ եկի լուծանել զՕրենս, այլ լնուլ»։ Քրիստոս եկավ Օրենքը և մարգարեությունը ամբողջացնելու: Եթե Հին Կտակարանին մեջ Օրենքը մարդ անհայրին կարգուկանոնին մեջ կ'առնե, Քրիստոս եկավ մարդ անհայրին շնորհքը ավելցնելու, պարգևն ավելցնելու, որպեսզի կարողանա աստվածային շնորհներով, աստվածային պարգևներով իր կյանքը փնտրեն իր իր կարարելություն: Եվ ահա պահեցողության այս շրջանն է, որ առիթ կըն-

ծայե մեզի որպես անհատ, որպես հավաքականություն անդրադառնալու այն բոլորին, որ մեր մեջ բացասական գիծեր հաստատված է: Անոնք թոթափելու, բարին, լավը, գեղեցիկն արժևորելու մեր կյանքին մեջ: Ու ինչպես հաջորդող կիրակիները մեզի քայլ առ քայլ կմտնեն և առ Աստված իրենց շարականներով, իրենց ընթերցումներով, այդպես նաև մենք կարողանանք մեր հոգիները մաքրած, սրբած մտքերնանք Աստուծո, որպեսզի այդ կատարելությունը Քրիստոսով նաև մեզի փոխանցվի, ըլլալու համար Աստուծո արժանավոր գավակները և Աստուծո արժանավոր ժառանգորդները:

Թող Երկնավոր Հայրը այս պահեցողության օրերը մեզի համար դարձնե ինքնաքննության և ինքնազննության օրեր ու մեզ մտնեցնե առ Բարձրյալն Աստված. ամեն:

Միրելի հարազատներ, եղբայրներ ու քույրեր, այսօր Ն.Օ.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր փնտրիությամբ Հայաստանյայց Եկեղեցին կհիշատակե Կ. Պոլսո Պարրիարք Երանաշնորհ Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանի ծննդյան 90-ամյակը: Շնորհք Պարրիարք Մեծ եղեռնի սերունդի գավակներեն էր, որ ճաշակեց հայ ժողովրդի դառնությունը ու իր փոքր փարիքեն որբանոցներուն մեջ մեծնալով, այնուհետև անցավ Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը և ընծայարանը: Հոն եկեղեցական ամենախոնարհ ապրիճաններեն բարձրացավ մինչև Կ. Պոլսո Պարրիարքության Աթոռը, ուր շուրջ 30 փարիներ հավատարմորեն ծառայեց Պոլսո Պարրիարքության և անով նաև Հայոց Եկեղեցին:

Դժբախտ պարագաներու փակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ սայթաքումի մը հետևանքով 1990 թվականին իր կյանքի թելը կտրվեցավ և իր հավիտենական հանգիստը մտավ: Այսօր Վեհափառ Հայրապետի փնտրիությամբ Հայաստանյայց Եկեղեցու բոլոր խորաններեն խոսք կուղղվի ժողովրդին Երանաշնորհ Պարրիարքի հիշատակը հարգելու ու անով մենք զմեզ գորացնելու որպես հայ ու քրիստոնյա: Հավարտ Ս. Պատարագի պիտի կատարվի Հոգեհանգստյան պաշտոն՝ Երանաշնորհ Պարրիարքի հոգվո խաղաղության համար:

Կաղոթենք առ Բարձրյալն Աստված, որ Շնորհք Պարրիարքներ մեծցնե ու աճեցնե մեր Եկեղեցիին մեջ, մեր Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին պարգևե երկար և առողջ փարիներ, որպեսզի իր հովվապետական գավազանը միշտ ծաղկյալ մնա, իր հայրական խոսքը միշտ հնչեղ մնա բոլորի ականջին, սրտին ու հոգիին մեջ, որպեսզի Հայ Եկեղեցու անդաստանը լեցուն ըլլա արժանավոր գավակներով, հոգևոր գավակներով, ինչպիսին էր Շնորհք Պարրիարք Գալուստյանը:

Թող Երկնավոր Հայրը խաղաղության մեջ հանգցեցնե հանգուցյալ Պարրիարքի հոգին. ամեն: